

## Խոշոր կաթնասունների նույնականացումն ու մոնիթորինգը

### Ընդհանուր ակնարկ

Խոշոր կաթնասունների տեսակները հարաբերակոներեն հեշտ նույնականացվում են կլոր տարին, սակայն սովորաբար տեսակի կամ պոպուլյացիայի կարգավիճակը պատշաճ գնահատելու համար մի քանի տարբեր մեթոդ և երկար ժամանակահատված են անհրաժեշտ լինում: Պոպուլյացիայի կազմի, դեմոգրաֆիայի և գենետիկ բազմազանության գնահատումը բավական բարդ աշխատանք է և պահանջում է մանրակրկիտ պլանավորում և թիրախային տեսակի էկոլոգիայի ընկալում:

### Մեթոդներ

**Հետքեր և այլ նշաններ.** ձյան, գետնի կամ ծառի բների վրա հետքերի նույնականացումը ծախսարդյունավետ, կլոր տարվա ընթացքում կիրառելի մեթոդ է և կարող է արժեքավոր գիտելիքներ տալ առանձին շարժերի վերաբերյալ:

**Թակարդ տեսախցիկներ.** Թակարդ տեսախցիկները մշտադիտարկում են կոնկրետ հատված, և երբ այդտեղ շարժում է դիտարկվում, արվում է լուսանկար կամ նկարահանվում կարճ տեսանյութ: Դրանք կարող են երկար ժամանակահատվածում ինքնուրույն աշխատել տարատեսակ միջավայրերում, նաև բացարձակ մթության պայմաններում և նույնիսկ նկարները անմիջապես ուղարկել որևէ կայքի կամ հեռախոսի: Թակարդ տեսախցիկների կիրառումը համարվում է տարբեր սեզոնների ժամանակ միգրացիոն և կեր փնտրելու

ընթացքում ի հայտ եկող վարքագծերի փոփոխությունների, պոպուլյացիաների չափերի, անհատական վարքագծերի մոնիթորինգի և գնահատման աննկատ ձև:

### Կղանք և այլ մնացորդներ.

Որոշ տեսակներ կարելի է նույնականացնել դրանց կղանքի տեսողական զննության միջոցով: Կենդանիների մնացորդները, ինչպիսիք են տրանսպորտային պատահարների արդյունքում սպանված կենդանիները, կարող են արժեքավոր տվյալներ տրամադրել՝ օգտագործվելով պոպուլյացիաների վերաբերյալ հաշվարկներն ամրապնդելու և միգրացիայի ու կենսագործունեության վերաբերյալ ցուցանիշներ ներկայացնելու համար:.



Թակարդ տեսախցիկ

**Որս.** Անհրաժեշտ է փաստաթղթավորել որսորդական գործունեությունը՝ որսի կենդանիների խտության վերաբերյալ անուղղակի տվյալներ տրամադրելու նպատակով: Կարելի է նաև նմուշներ հավաքել և դրանք ուղարկել գիտական հաստատություններ, որտեղ վերջիններս արժեքավոր տեղեկություններ կարող են բացահայտել, օրինակ, այդ տեսակների վարակիչ հիվանդությունների կամ մակաբույծների վերաբերյալ:

**ԴՆԹ, (շմ)ԴՆԹ(eDNA).** ԴՆԹ (արյուն, կղանք, այլ մնացորդներ) կամ շրջակա միջավայրից վերցվող ԴՆԹ պարունակող նմուշները կարող են օգտագործվել տեսակներ և նույնիսկ առանձնյակներ նույնականացնելու համար: ԴՆԹ կարելի է ստանալ կղանքի նմուշներից՝ մի քանի տեսակների առկայությունը միաժամանակ

նույնականացնելու նպատակով: Այն մոնիթորինգի ծախսարդյունավետ և ոչ ինվազիվ եղանակ է, բայց նաև կարող է կիրառվել պոպուլյացիաների կենսունակությունը գնահատելու համար, օրինակ, թե որքանով է խաչասերված պոպուլյացիան:

**Անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ), դրոններ:** Օդային տեսախցիկները կարող են օգտագործվել դժվարամատչելի վայրերում խոշոր կաթնասուններին, օրինակ՝ բեզուարյան այծին (*Capra aegagrus*) նույնականացնելու և մոնիթորինգի ենթարկելու համար:

### Տեղեկատվական ակնարկ

Խոշոր գիշատիչների մասին Եվրոպական հանձնաժողովի վերջին զեկույցում ԵՄ անդամ պետություններին առաջարկվում է հաշվի առնել մի քանի գործողություն: Առաջարկվող գործողություններից մեկը երկրներում մոնիթորինգի մեթոդների ստանդարտիզացումն է: Զեկույցով առաջարկվում է պոպուլյացիաների կարգավիճակը (առատությունն ու տարածվածությունը) ամեն տարի հրապարակել և քաջալերվում է հարևան երկրներին տվյալներով կիսվելու հարցում: Զեկույցը նաև հիշեցնում է, որ «հզոր մոնիթորինգը ճկուն/հարմարվողական կառավարման մաս է կազմում»:

Մի քանի երկրների ՀԿ-ներ ստեղծել են տվյալների հավաքագրման ուժեղացմանն (թվի մեծացմանն) ուղղված համակարգ: Օրինակներից մեկը խոշոր գիշատիչների մոնիթորինգն է Արևմտյան Կարպատներում ([www.carnivores.cz/](http://www.carnivores.cz/)), որտեղ ՀԿ ծրագրի կամավորները լուսանների և գայլերի մոնիթորինգով են զբաղվում: Այնուամենայնիվ, շատ երկրներում կամավորների ներդրած ջանքերն արտացոլվում են վերջիններիս կողմից կատարված դիտարկումներով և դրանք բաց տվյալների

շտեմարաններում պահպանելով: Կամավորների ջանքերով ձեռք բերված այդ տվյալները կարող են հետագայում գնահատվել և վերլուծությունների ենթարկվել գիտնականների կողմից, օրինակ, տեսակների մոնիթորինգի և պահպանության հարցերում աջակցության հանգեցնելով:

Տեսակների պահպանության մի մասը նպատակաուղղված է տեսակների ապրելավայրերի նկատմամբ անցանկալի ուշադրությունն ու դրանց խաթարումը զսպելուն: Դա կարելի է անել որոշակի տեսակներ որպես «զգայուն» դասակարգելով: Զգայուն տեսակների ապրելավայրերի վերաբերյալ տվյալները չպետք է հանրությանը հասանելի լինեն կամ պետք է ոչ հստակ ներկայացվեն՝ տեսակների ճշգրիտ ապրելավայրը պաշտպանելու նպատակով: Զգայուն ապրելավայրերի վերաբերյալ տվյալների հասանելիությունը պետք է սահմանափակվի որոշակի անձնակազմով, որը նման տվյալների կարիք ունի իր աշխատանքի (օր.՝ կառավարման ծրագրեր կազմելու, մշակելու) բերումով:



## Խոշոր կաթնասունի դեպքի ուսումնասիրություն

### Կովկասյան ընձառյուծ (Panthera pardus tulliana)

ԲՊՄՄ (IUCN) կարմիր ցանկի ինդեքս՝ խոցելի (VU) (Panthera pardus)

Իրավական կարգավիճակը ԵՄ-ում՝ Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առեվտրի մասին կոնվենցիա (CITES), Հավելված I

ԲՊՄՄ կարգավիճակը Հայաստանում՝ ծայրահեղ վտանգված (CR), պահպանվում է 1972թ-ից:

Ինչպես հաշվառել և մոնիթորինգ կատարել՝ հետքեր և այլ նշաններ, թակարդ տեսախցիկներ, կղանք և այլ մնացորդներ, ԴՆԹ/շմԴՆԹ Երբ հաշվառել և մոնիթորինգ կատարել՝ կլոր տարին:



Կովկասյան ընձառյուծ (Panthera pardus tulliana).  
Լուսանկարը՝ Տարնար Ասաֆի, Վիկիմեդիա

## Խոշոր կաթնասունների դեպքի ուսումնասիրություն

### Բծավոր բորենի, (Hyaena hyaena)

ԲՊՄՄ (IUCN) կարմիր ցանկի ինդեքս՝ գրեթե անհետացման եզրին գտնվող (NT) Իրավական կարգավիճակը ԵՄ-ում՝ - ԲՊՄՄ կարգավիճակը Հայաստանում՝ տարածաշրջանում անհետացած (RE)

Ինչպես հաշվառել և մոնիթորինգ կատարել՝ հետքեր և այլ նշաններ, թակարդ տեսախցիկներ, կղանք և այլ մնացորդներ, ԴՆԹ/շմԴՆԹ

Երբ հաշվառել և մոնիթորինգ կատարել՝ կլոր տարին:



Բծավոր բորենի (Hyaena hyaena),  
Լուսանկարը՝ Ռաշիկեշ Դեշմուքի, DOP (CC-BY-SA-4.0).